դրված լինում և կամ առանձին, որպեսզի խաչերի երկրպագուներն իրենց աղոթքի մեջ հիշեն խաչքարը կանգնեցնողին և նրա մեղքերին թողություն հայցեն։ Այնպես որ, սրանք ևս արդյունք են նույն տրամադրությունների, որոնք առաջ եկան և տիրապետեցին 13-րդ դարից սկսած գրեթե մինչև 19-րդ դարը, որոշ ընդմիջումներով։

Այստեղ ավելորդ չենք համարում զետեղել մի աղյուսակ, որ նվիրված է Սանահնի վիմական արձանագրությունների բնույթին ըստ դարերի։

Այս աղյուսակից երևում է, որ թեև Սանահնի վանքի շենքերի հիմնական խումբը կառուցվել է 10-րդ դարում, բայց շինարարական արձանագրությունների մեծ մասը պատկանում է 12-րդ դարին՝ Կյուրիկյան թագավորների և Զաքարյան իշխանների ժամանակաշրջանին։ Հետաքրքիրն այն է, որ 13-րդ դարի շինարարական բնույթի արձանագրություններից և ոչ մեկը Ջալալեդդինի արշավանքից հետո ընկած ժամանակաշրջանին չի պատկանում, դրանք բոլորն էլ վերաբերում են մինչև 1225 թվականը ընկած շրջանին։ Շինարարական բնույթի բոլոր 19 արձանագրություններից 15-ը պատկանում են 10-րդ դարից սկսած մինչև 1225 թվականը, ըստ որում 10-ը՝ 12-րդ դարի վերջերին և 13-ի սկզբներին, մեկը՝ 17-րդ դարին, երբ Հայաստանում քաղաքական ու տնտեսական աշխուժություն էր տիրում և 3-ը պատկանում են 19-րդ դարին, երբ Հայաստանի մի մասն արդեն միացած էր Ռուսաստանի կայսրության և հայկական հասարակական կյանքը վերածնունդ էր ապրում։

Թուրք-թաթարական տիրապետության ժամանակաշրջանի համար բնորոշ են նվիրատվական արձանագրությունները, որոնք,

№№	Արձանագրությունների բնույթը	Ընդհանուր թիվը	Ըստ դարերի									
			10-րդ դար	11-րդ դ.	12-րդ դ.	13-րդ դ.	14-րդ դ.	15-րդ դ.	16-րդ դ.	17-րդ դ.	18-րդ դ.	19-րդ դ.
1	Թագավորական, իշխանական հրամանագրեր	2	1	—	—	1	—	—	—	—	—	—
2	Շինարարական	19	1	1	10	3	—	—	—	1	—	3
3	Նվիրատվական	68	—	3	6	52	2	2	2	1	—	—
4	Հիշատակագրություններ	23	—	1	8	8	—	—	3	3	—	—
5	Տապանագրեր	69	1	—	2	19	29	9	4	2	1	—
6	Աղոթք	1	—	—	—	1	—	—	—	—	—	—
7	Բացատրագիր	1	—	—	—	1	—	—	—	—	—	—
8	Եղծված ու անհասկանալի արձանագրություններ	6	—	1	1	4	—	—	—	—	—	—
	Ընդամենը	189	3	6	27	89	31	11	9	7	1	3
	Որից թվական ունեն	90	1	3	13	49	4	5	5	6	1	3

ինչպես վերևում նշեցինք, արդյունք են անկումային տրամադրությունների։ Բացի այդ, նույն ժամանակի համար հատկանշական է նաև տապանագրերի առատությունը և խաչքարերի վրայի հիշատակագրական բնույթի արձանագրությունները։ Այս շրջանի խաչքարերի վրա ևս նկատելի է ժողովրդի անկումային տրամադրությունները, որովհետև այդ խաչքարերը կանգնեցրել են մեծ մասամբ պատվիրատուների հիշատակին, նրանց հոգու փրկության համար։

* * *

Սանահնի վիմական արձանագրությունների լեզուն ընդհանուր առմամբ կանոնավոր է. գրեթե բոլորն էլ գրված են իրենց ժամանակի գրաբարով՝ այն չափով, ինչ չափով նա ընդունված է եղել վիմական արձանագրությունների մեջ։ Տեղական բարբառով գրված և ոչ մի արձանագրություն չկա, թեև հաճախ առանձին դարձվածքների, արտահայտությունների մեջ զգացվում է տեղական բարբառի ազդեցությունը։ Բավականաչափ կանոնավոր լեզվով գրված արձանագրությունների մեջ պատահում են, օրինակ, Հայրապետի փոխարեն հերապետ (№ 65 արձ.), այգի-ի փոխարեն էգի (62, 128, 129), իգի (62)։ Նկատվում է ինչ որ ձգտում ե-ի փոխարեն պարզ է գրելու, եկեղեցի-ի փոխարեն էկէղեցի (արձ. 115, 125), էկեղեցի